

փախուքը կը դադրի բնդհանրապէս այդ ատեն, եթէ միայն սպիտակամարմինն է պատճառը: Հոս ուրիշ պատճառներ, իմ նիւթէս դուրս են:

ԱՐՈՐԶԻՔԵՆԵՐԸ.— Կը պատարաստեն արտաքին նիւթ մը սերմը՝ բեռնաւորութեամբ սերմնապնդաններով: Ներքնածոր նիւթը պատասխանատու է սեռային այն երկրորդական նշաններուն, որոնք ի յայտ կու գան արբուներէ ատեն: Սեռային գրգռականութիւնը (*libido*) հասնարար արդիւնք է ներքնահոս հորմոնին: Ասոր կանխորոշումը չափով հոսումն է որ կ'որոշէ արբուներէ հասնիրը:

ԳԵՂՁԵՐՈՒ Է ԱՍԻԱՍԱՐԱՆԵՌՈՒԹԻՒՆԸ.— Գեղձաբաններ չափունակական ապացոյց ունին պնդելու որ օղակ մը կայ որ որոշապէս կը գեկալարէ անոնց գործունէութիւնը, պահելով հաւասարակշիռ վիճակ մը մարմինին մէջ: Մէկուն գրգռումը՝ միւսն ալ կը գրգռէ կամ կը նախճահարէ: Օրինակ ձուարանը ներզաշնակ է վահանազեղծին, մաղասայլինն եւ վերերիկամային գեղմերուն հետ: Բայց այս պաշտօնակցութիւնը կրնայ նաեւ խանգարուիլ ստիւքով, ընկերքով եւ թիմուս գեղձով: Դարձեալ, սեռային գեղմերու կատարեալ աճումէն հտք, թիմուսը կը չքանայ հրապարակէն, որովհետեւ եթէ մնար, անոնք մանկական չրջանէն աւելի չէին անցներ, եւ սեռայիներկրորդական յատկութիւններն ալ երեւան չէին կրնար գալ: Դարձեալ, ընկերքը՝ կ'արգիլէ մաղասայլինին յետակողմի մասէն ծորող հորմոնը: Ասի արդանդի կծկումին վրայ հզօրապէս կը ներգործէ, եւ կրնայ յզուծեան ժամանակը լրանալէ առաջ վիժման պատճառ ըլլալ: Ինչերորդ ամիսը լրանալէ վերջն է միայն որ հաւասարակշիռութիւնը կը խախտի եւ մաղասային գեղձը կուգայ աստղաբեղ, բեռնաւորութեամբ արդանդր պարպելու: Ենթա թէ ինչպէս կը սկսին արգանդի կծկումները եւ ծննդաբերութեան ցուերը: Ասոնք եւ ուրիշ փոփոխութիւններ, ախրնախ կը ցուցնեն գեղձերու ունեցած փոխյարաբերութիւնները: Բժշկութեան մէջ չկայ աւելի մութ ու դժման փորձագիտութիւն մը, որքան այս նոր գիտութեան մէջ: Ես յաւակնութիւնը չունիմ կատարեալը տուած ըլլալու: Պարզ փորձ մը ըրի ծանօթացնելու համար իրականութիւններ, որոնք իրենց հետաքրքրութեանը մէջ ա՛յնքան առիւթնոյ կ'են:

(Ուստըր-Ամերիկա)

ԲԺ. ԳԵՂԱՄ ՍԵՐՈԲԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍԻՐԵՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, կը կարգաս եւ կ'օգտուիս, Ձե՛ս ՈՒՋԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆԵԼ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կանգնան, սիրեն եւ օգտուին «Բուժանք»էն եւ զարգացնեն զայն: